ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բրտոյանի շնորհավորանքի խոսքը ՀՀ Սահմանադրության օրվա առթիվ

05.07.2017

Հարգելի հայրենակիցներ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որը 1995 թվականին ընդունվեց համաժողովրդական հանրաքվեի արդյունքում, հիմնովին ծառայեց իր նպատակին՝ նպաստելով ժողովրդավարական, իրավական ու ինքնիշխան Հայաստանի կերտմանը, զարգացմանն ու պաշտպանունակության ամրապնդմանը, մեր երկիրը զերծ պահելով ներքին ու արտաքին սպառնալիքներից:

Շնորհավորում  եմ ձեզ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առթիվ, ցանկանում խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով շնչող հայրենիք, անսպառ երջանկություն, քաջ առողջություն ու նորանոր հաջողություններ, ամենայն սեր ու բարիք, համահայկական  նպատակների իրագործում:

Ձերմ բարեմաղթանքներով՝

Գեղարքունիքի մարզպետ       Կարեն Բրտոյան